

ELECTORAL TERMINOLOGY



DICTIONARY



Հայերեն-Անգլերեն | Armenian-English

ԸՆՏՐԱԿԱՆ

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ



ԸՆՏՐԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ELECTORAL
TERMINOLOGY DICTIONARY

Հայերեն-Անգլերեն | Armenian-English

ԵՐԵՎԱՆ 2022 | YEREVAN 2022



Ընտրական Համակարգերի
Միջազգային Հաստատություն

Ընտրական տերմինաբանական բառարանը կազմվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ի) կողմից: Բառարանը նախատեսված է լայն հանրության համար, այն կարող է կիրառվել կրթական նպատակներով՝ հղում կատարելով աղբյուրին: Սույն հրատարակությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) ֆինանսավորմամբ: Հրատարակության բովանդակության համար պատասխանատու են հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

This electoral terminology dictionary was prepared jointly by the Central Electoral Commission and the International Foundation for Electoral Systems (IFES). The dictionary is intended for the general public and may be used for educational purposes with a reference to the original source.

This publication is made possible through funding from the United States Agency for International Development (USAID). The content of the publication is that of the authors and does not necessarily reflect the views of USAID or the United States Government.

Խմբագիրներ / Editors
(Արմեն Սմբատյան, Արուսյակ Տերչանյան)
(Armen Smbatyan, Arusyak Terchanyan)

Հրատարակիչ / Publisher
ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ
TUMO DESIGN LLC

Բովանդակություն

Contents

Գլուխ 1. Միջազգային նորմեր	Chapter 1. International Norms	07
Գլուխ 2. Կառավարման համակարգ	Chapter 2. Government System	11
Գլուխ 3. Ընտրություններ	Chapter 3. Elections	15
Գլուխ 4. Ընտրություններ. իրավական դաշտ	Chapter 4. Elections and Legal Framework	21
Գլուխ 5. Ընտրական իրավունք	Chapter 5. Suffrage	27
Գլուխ 6. Ընտրությունների ֆինանսավորում	Chapter 6. Election Funding	37
Գլուխ 7. Զվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձիք	Chapter 7. Persons Entitled to be Present in the Voting Room	39
Գլուխ 8. Ընտրական հանձնաժողովներ	Chapter 8. Electoral Commissions	45
Գլուխ 9. Զվեարկության կազմակերպում	Chapter 9. Organization of Voting	49
Գլուխ 10. Զվեարկության կարգ	Chapter 10. Voting Procedure	57
Գլուխ 11. Զվեարկության արդյունքների ամփոփում	Chapter 11. Summarization of Voting Results	63

Գլուխ
Chapter | 1

Միջազգային նորմեր International Norms

Միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ

Միջազգային պայմանագիր

Համաձայնություններ միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, որոնց միջոցով վերջիններիս համար ստեղծվում, փոփոխության են ենթարկվում կամ դադարեցվում են իրավունքներ ու պարտականություններ: Պարունակում են փոխադարձ իրավունքներ ու պարտավորություններ:

Միջազգային կոնվենցիա

Միջազգային պայմանագրի (համաձայնագրի) տեսակ, որը ենթադրում է դրա կնքող կամ այն հետագայում վավերացնող մասնակիցների (սուբյեկտների) կողմից որոշ չափորոշիչների սահմանում, դրանց պահպանում և կիրառում: Պարտավորությունները կարող են սահմանափակվել տվյալ սուբյեկտի (պետության) օրենքներով:

International Treaties and Conventions

International Treaty

Agreements between the subjects of international law. They can be about the creation, change, termination of international associations, or bodies. They contain mutual rights and obligations.

International Convention

A type of international treaty (agreement) that involves the support, observance, and application of certain standards by its signatory or ratifying parties. Obligations may be limited by the laws of the entity (State).

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենք

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար հիմունքներով քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրացման համար բարենպաստ պայմանների, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցության և արդյունավետ սոցիալական ներառման ապահովման նպատակով ընդունված օրենսդրական ակտ:

Ընդհանուր դրույթներ

Հիմնական սկզբունքները և / կամ հիմունքները պարունակող, ներկայացնող մաս, բաժին:

RA Law on the Rights of Persons with Disabilities

A law adopted to ensure favorable conditions for the exercise of civil, political, economic, social, and cultural rights, and freedoms of persons with disabilities on an equal basis with other persons, their equal participation in public life, and effective social inclusion.

General Provisions

A part or section containing / presenting the main principles, and/or the basics.

Գլուխ
Chapter | 2

Կառավարման համակարգ Government System

Կառավարման համակարգ

Աշխատանքի պլանավորման, կազմակերպման, գործընթացի նկատմամբ վերահսկողության մեթոդների և նորմերի ամբողջություն: Օրինակ՝ հանրային կառավարման համակարգ, տեղական ինքնակառավարման համակարգ, կազմակերպության կառավարման համակարգ և այլն:

Օրենսդիր մարմին / Ազգային ժողով / Խորհրդարան

Ընտրությունների միջոցով ձևավորված ներկայացուցչական մարմին, հանրային իշխանության ինքուրույն և անկախ ճյուղ: Օժտված է օրենքներ ընդունելու, փոփոխելու, որոշ դեպքերում նաև վերահսկողական լիազորություններով:

Հանրապետության նախագահ

Հայաստանի Հանրապետության նախագահը պետության գլուխն է, ընտրվում է Ազգային ժողովի կողմից 7 տարի ժամկետով, հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Government System

A model, set of methods, and norms on work planning, organization, and process control. For example, public administration system, local self-government system, company management system, etc.

Legislative body / National Assembly / Parliament

A representative body formed through elections, a consultative assembly, an independent branch of public power. It is endowed with the power to pass and change laws, and in some cases also with supervisory powers.

President of the Republic

The President of the Republic of Armenia is the head of the State, is elected by the National Assembly for a term of 7 years, and observes the compliance with the Constitution.

Գործադիր իշխանություն / Կառավարություն / Գործադիր իշխանություն

Պետական, հանրային իշխանության ինքնուրույն և անկախ տեսակ: Օժտված է գործադիր - կարգադրի գործառույթներով, պետական սեփականության տնօրինման լիազորությամբ: Հաշվետու է օրենսդիր մարմնին:

Վարչապետ

Կառավարության ղեկավար, համակարգում է կառավարության անդամների աշխատանքը, տալիս հանձնարարականներ, հրավիրում և վարում է կառավարության նիստերը, ստորագրում կառավարության որոշումները:

Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, ընտրվում են տվյալ համայնքի կողմից 5 տարի ժամկետով:

Executive power / Government / Executive power

An independent type of state and public power. It has the authority to conduct state affairs and manage state property. It is accountable to the Legislative body.

Prime Minister

The head of the government who coordinates the work of the members of the government, gives instructions, convenes and conducts government sittings, signs government decisions.

Local Self-Government Bodies (LSGB)

Local self-government bodies are the Community Council of Elders, and the Head of the Community. They are elected by the community for a term of 5 years.

Դատական մարմին / Դատարաններ

Արդարադատություն իրականացնող պետական իշխանության մասնագիտացված անկախ ատյան, համակարգ: Լուծում է վեճեր, կայացնում է որոշումներ պետության անունից, գործում է օրենքներով և օրինականության սկզբունքով:

Judicial Body / Courts

A specialized, independent instance and/or system of state power administering justice. It resolves disputes, makes decisions on behalf of the state, and acts in accordance with the law, and on the principle of legality.

Գլուխ
Chapter | 3

Ընտրություններ Elections

Ընտրություններ

Պետական կամ համայնքային իշխանություններ ձևավորելու համար պետության կողմից կազմակերպվող, պարբերաբար տեղի ունեցող համընդհանուր քվեարկություն:

Հանրաքվե

Համապետական, տարածաշրջանային կամ տեղական նշանակության հարցերի վերաբերյալ ընդհանուր քվեարկություն, որին մասնակցում են տվյալ սուբյեկտում (տարածքում) ընտրական իրավունք ունեցող անձինք:

Ազգային ժողովի ընտրություններ

Ազգային ժողովի պատգամավորներ ընտրելու համար կազմակերպվող ընտրություններ: ՀՀ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով, 5 տարի ժամկետով, կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

Համամասնական ընտրական համակարգ

Ընտրապայքարին մասնակցում են կուսակցությունները կամ դաշինքները՝ առաջադրելով ընտրական ցուցակներ:

16

Elections

A periodic popular vote organized at regular intervals by the State to form state or municipal governments.

Referendum

Popular vote on issues of national, regional or local significance, in which persons entitled to vote in a given area participate.

National Assembly Elections

Elections organized to elect members of the National Assembly, i.e. Deputies. The RA National Assembly is elected through proportional electoral system for a term of 5 years, consisting of at least one hundred and one Deputies.

Proportional Electoral System

Political parties or alliances contest the elections by submitting electoral lists. The voters themselves make the choice between the political parties and alliances. The distribution of seats corresponds to

Ընտրողներն իրենց ընտրությունը կատարում են կուսակցությունների, դաշինքների միջև: Ստացած ձայների համամասնությամբ կուսակցությունների կամ դաշինքների հասանելիք մանդատները տրվում են առաջադրած ընտրական ցուցակի համապատասխան թեկնածուներին:

Մեծամասնական ընտրական համակարգ

Ընտրապայքարին մասնակցում են անհատ թեկնածուներ, ովքեր կարող են առաջադրվել որևէ կուսակցության կողմից կամ ինքնաառաջադրման եղանակով: Ընտրողներն ընտրությունը կատարում են անհատ թեկնածուների միջև: Ընտրված է համարվում մեծամասնության ձայներ ստացած կամ առավելագույն ձայներ ստացած թեկնածուն:

Հերթական ընտրություններ

Ընտրովի մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների ժամկետը ավարտվելու հանգամանքով պայմանավորված անցկացվող պարբերական ընտրություններ:

the proportion of the votes received, and mandates of each political party or alliance are given to the respective candidates nominated in the electoral lists.

Majoritarian Electoral System

Individual candidates nominated by a political party or self-nominated can run in the elections. Voters choose between the individual candidates. The candidate who receives the majority or the maximum number of votes is considered elected.

Regular Elections

Elections held at periodic intervals due to the expiry of powers of the elected body as defined by the legislation.

Արտահերթ ընտրություններ

Ընտրովի մարմնի լիազորությունները վաղաժամկետ դադարելու հանգամանքով պայմանավորված՝ տեղի ունեցող ոչ հերթական ընտրություններ:

Նոր ընտրություններ

Ընտրությունները չկայացված ճանաչվելու կամ անվավեր համարվելու հանգամանքով պայմանավորված՝ նորից անցկացվող ընտրություններ:

Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարումը իրականացվում է համայնքներում, օժտված է սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հարցեր, սպասարկելու համայնքի բնակիչների շահերը, գործում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Snap Elections

Elections held due to the early termination of powers of the elected body.

New Elections

Re-held elections due to the fact that the elections were declared invalid or did not take place.

Local Self-Government

Local self-government is exercised in communities, has the responsibility to resolve issues of community importance on its own, serves the interests of community residents, and operates in accordance with the Constitution and laws.

Տեղական ինքնակառավարման մարմնի ընտրություններ

Տեղական ինքնակառավարման մարմիններ ձևավորելու համար պետության կողմից կազմակերպվող ընտրություններ:

Խոշորացված (միավորված) համայնք

Նախկինում առանձին վարչատարածքային միավոր հանդիսացող և առանձին տեղական ինքնակառավարման մարմիններ ունեցող համայնքների՝ օրենքի հիման վրա միավորման եղանակով մեկ վարչատարածքային միավորի վերափոխված համայնք:

Համայնքապետարան

Համայնքային կառավարչական հիմնարկ, համայնքային գրասենյակ, համայնքի և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն ապահովող ինքնուրույն կառուցվածք և աշխատակազմ ունեցող միավորում:

Local Self-Government Elections

Elections to elect local self-government bodies, organized by the State.

Amalgamated Community

Formerly separate administrative units with separate local self-government bodies merged into a single administrative unit by based on the amending the law.

Municipality

A community administrative institution, a community office, a unit with independent structure, and staff ensuring the functionality of the community and local self-government bodies.

Համայնքի ղեկավար

Համայնքի գործադիր մարմին, գործում է համայնքի անունից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, վարում է համայնքի ավագանու նիստերը, հանդիսանում է ընտրովի քաղաքական պաշտոն:

Ավագանի

Համայնքի ներկայացուցչական մարմին, որն ընտրվում է 5 տարի ժամկետով, հաստատում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, համայնքի բյուջեն, վերահսկում է դրա կատարումը, իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված այլ լիազորություններ:

Ավագանու անդամ

Համայնքի ներկայացուցչական մարմնի անդամ, ընտրովի պաշտոն: Մասնակցում է ավագանու նիստերին, ավագանու քվեարկություններին, իրականացնում է օրենքով վերապահված վերահսկողական և այլ լիազորություններ:

Head of Community

The executive body of the community, acting on behalf of the community in accordance with the Constitution and laws, conducts the meetings of the Community Council of Elders and is an elective position.

Council of Elders

The representative body of the community elected for a term of 5 years that approves the annual work plan of the community, and the community budget, supervises the implementation of the latter, and performs other functions provided by the Constitution and laws.

Member of the Council of Elders

A member of the community representative body, an elective position. He/she participates in the sittings and voting of the Community Council of Elders, exercises supervisory powers and other provided by the law.

Գլուխ
Chapter | 4

Ընտրություններ. Իրավական դաշտ Elections and Legal Framework

Հիմնական սկզբունքներ

Սկզբունքներն իրենց բնույթով հիմնարար և առաջնային դրույթներ են, որոնք հիմք են հանդիսանում ամբողջ բովանդակության համար, որոնց վրա կառուցվում են մնացած նորմերը:

Քաղաքական իրավունքներ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից (Միավորված ազգերի կազմակերպություն) բխող, երաշխավորվող իրավունքների և ազատությունների ամբողջություն, որը պարունակում է անձանց քաղաքական մասնակցության, քաղաքական ազատության, ազատ խոսքի, հավաքների ազատության և այլ իրավունքներ:

Ընդհանուր ընտրական իրավունք

Առանց որևէ խտրականության ընտրելու և ընտրվելու իրավունք:

Հավասար ընտրական իրավունք

Ընտրություններին, որպես ընտրող օժտված է հավասար ծայնի իրավունքով՝ անկախ որևէ սոցիալական կամ քաղաքական կարգավիճակից:

22

Basic Principles

Principles, which by nature are fundamental and primary, serve as a basis for all the content, and the rest of the principles are built on them.

Political Rights

A set of guaranteed rights and freedoms under the Universal Declaration of Human Rights (United Nations), includes the rights of individuals to political participation, political freedom, freedom of speech, freedom of assembly, and other rights.

General Suffrage

The right to elect and be elected without any discrimination.

Equal Suffrage

Equal right to participate in the elections as a voter or candidate, regardless of any social or political status.

Ազատ ընտրական իրավունք

Ընտրություններում սեփական կամարտահայտությանն անկաշկանդ իրացնելու, քվեարկելու հնարավորություն, իրավունք:

Ուղղակի ընտրական իրավունք

Քվեարկությանն անձամբ, առանց միջնորդի մասնակցելու օրենսդրական պահանջ:

Ներառական ընտրություններ

Ընտրություններ, որոնք բացառում են որևէ խտրականություն և կազմակերպված են այնպես, որ լինեն մատչելի բոլոր խմբերի և անձանց համար:

Քվեարկության գաղտնիություն

Ինքնուրույն քվեարկելու, քվեն չհրապարակվելու իրավունքը պարտականություն:

Ընտրությունների հրապարակայնություն

Հանրության համար ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության ազատ և հրապարակային հասանելիության հնարավորություն, պահանջ:

Free Suffrage

An opportunity/right to exercise one’s free will, and to vote in elections.

Direct Suffrage

A legislative requirement to participate in the voting in person, without a mediator.

Inclusive Elections

Elections that exclude any discrimination and are organized in an accessible way for all groups and individuals.

Secrecy of Vote

A right / requirement to vote independently, and not to publish the vote.

Election Publicity

An opportunity / requirement for free and public access to information about the elections.

Ընտրական տարիք

Այն տարիքը, որի լրանալուց անձը, քաղաքացին ձեռք է բերում ընտրություններին մասնակցելու, քվեարկելու, ընտրելու, ընտրվելու իրավունք.
ՀՀ-ում 18 տարեկան:

Տեղեկատվություն ստանալու իրավունք

Անխոչընդոտ, թափանցիկ, իրական, արժանահավատ տեղեկության հասանելիություն:

Խտրականության բացակայություն, օրենքի առջև հավասարություն

Օրենքի դրույթների կիրառության միօրինակություն, առանց արտոնությունների և խտրականության, այդ թվում պաշտպանության հավասար իրավունք:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն

Կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածություն, հավասար հնարավորություններ, ռեսուրսներ, հավասար գնահատվածություն և փոխհատուցում:

Voting Age

The age at which a person, a citizen acquires the right to participate in elections, to vote, to elect, and to be elected: in the Republic of Armenia it is set at 18 years old.

Right to Information

Access to unobstructed, transparent, real, credible information.

No Discrimination and Equality before the Law

Uniformity of application of the provisions of the law, without privileges and discrimination, including the equal right to protection.

Equality between Women and Men

Equal involvement of women and men, equal opportunities, resources, equal appreciation, and compensation.

Կոռուպցիայի կանխարգելում

Միջոցառումների ամբողջություն, որոնք թույլ են տալիս կոռուպցիոն երևույթների հնարավոր դրսևորումների, ռիսկերի կանխատեսում և կանխում, պատշաճ վերահսկողության ներդրում:

Prevention of Corruption

A set of measures that allow for the possible detection of corruption, risk forecasting and, prevention, and introduction of proper control.

Գլուխ
Chapter | 5

Ընտրական իրավունք Suffrage

Ընտրական իրավունք

իրավունքի ճյուղ, որը կարգավորում է ընտրությունների հետ կապված ընտրական սուբյեկտների միջև ծագող հարաբերություններ: Անձի ընտրական իրավունքը քաղաքական հիմնական իրավունքներից է: Ընտրական իրավունքն ունի երկու հիմնական տեսակ՝ ակտիվ և պասիվ: Ակտիվ ընտրական իրավունքը վերաբերում է ընտրելու իրավունքին, պասիվ ընտրական իրավունքը՝ ընտրվելու իրավունքին:

Օրենք

Պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված, իրավական նորմեր պարունակող պարտադիր և համընդհանուր կիրառման ենթակա իրավական ակտ:

Սահմանադրություն

Պետության մայր օրենք (հիմնական օրենք): Կարգավորում է պետության կառուցվածքը, կառավարման համակարգը, իշխանության թևերն ու նրանց լիազորությունները, կազմավորման կարգը, ամրագրում է մարդու քաղաքական և քաղաքացիական հիմնական

Suffrage

A type of law, branch, which refers to electoral legal relations, and their regulation. Suffrage is one of the basic political rights. There are two main types of suffrage: active and passive. Active suffrage refers to the right to vote; passive suffrage refers to the right to be elected.

Law

An act adopted by the legislative body of the State, contains legal norms, is subject to obligatory and universal observance. made for the purpose of organization of elections.

Constitution

The main law of the State (basic law). It regulates the structure of the State, the governance system, the branches of the government and their powers, the order of formation, and the basic electoral and civil rights. As a rule, it is adopted and amended by referendum through universal suffrage.

իրավունքները: Որպես կանոն ընդունվում և փոփոխվում է հանրաքվեով՝ համընդհանուր քվեարկության միջոցով:

Ընտրական օրենսգիրք

Ընտրական իրավահարաբերությունների, ընտրությունների նախապատրաստման, անցկացման, ամփոփման աշխատանքների կազմակերպման, ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ ճյուղային համապարփակ օրենք: ՀՀ-ում այն ունի սահմանադրական օրենքի կարգավիճակ:

Ընտրելու իրավունք

Ընտրություններին մասնակցելու իրավական հնարավորություն, քվեարկելու իրավունք, որը տրվում է որոշակի կարգավիճակ ունեցող, կոնկրետ տարիքի հասած անձանց. օրինակ՝ 18 տարին լրացած և քաղաքացիություն ունեցող, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև քաղաքացիություն չունեցող անինք:

Electoral Code

A comprehensive sectorial law on electoral legal relations, preparation, organization, summarization of elections, and exercise of suffrage; it has the status of constitutional law in the Republic of Armenia.

Right to Elect

An opportunity to participate in elections, the right to vote, which is given to persons with a certain status, of a certain age. For example, persons over 18 years of age who hold citizenship are entitled to vote.

Ընտրվելու իրավունք

Ընտրություններին, որպես թեկնածու մասնակցելու օրենսդրական հնարավորություն: Որոշ պաշտոնների համար անձը պետք է բավարարի կոնկրետ չափանիշների. օրինակ՝ ԱԺ պատգամավորի համար՝ 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացիություն և ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող անձ:

Ընտրողների ռեգիստր

Ընտրելու իրավունք ունեցող անձանց՝ պետության կողմից վարվող ամբողջական ցանկ, տվյալների բազա:

Ընտրողների ցուցակներ

Ընտրությունները կազմակերպելու նպատակով ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմված կոնկրետ ընտրությանը մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների ցանկ: Ներառում է ընտրողի անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն, ծննդյան ամսաթիվը:

Right to be Elected

A legislative opportunity to run in the elections as a candidate. For some positions, the person must meet certain criteria. For example, everyone who has attained the age of 25, has been a citizen of the Republic of Armenia only, and has been permanently residing in the Republic of Armenia for the preceding 4 years may be elected as Deputy of the National Assembly.

Voter Roll

A complete list / database of persons entitled to vote.

Voter Lists

List of voters eligible to vote in a specific election based on the voter roll made for the purpose of organization of elections. Includes the name, surname, patronymic name, registration address, and date of birth of each voter.

Ընտրողների ցուցակների մատչելիություն

Ընտրողների ցուցակների տվյալների նկատմամբ հասանելիություն, ծանոթանալու հնարավորություն:

Ընտրողների ցուցակների անճշտություններ

Ընտրողների ցուցակներում տեղ գտած վրիպումներ, սխալ տվյալներ, որոնք ենթակա են ուղղման կամ հեռացման:

Ընտրողների լրացուցիչ ցուցակ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության օրը կազմվող ցուցակ, որում ներառվում են ընտրողների ցուցակից դուրս մնացած ընտրողները:

Կուսակցություն

Քաղաքական միավորում, հասարակական-քաղաքական կազմակերպություն, քաղաքական և քաղաքացիական համատեղ նպատակներով անձանց միություն: ՀՀ-ում ստեղծվում է օրենքով սահմանված կարգով և ենթակա է պետական գրանցման:

Voter List Accessibility

Access and opportunity to get acquainted with the voter list data.

Voter List Inaccuracy

Errors in the voter lists, incorrect data that need to be corrected or removed.

Supplementary Voter List

A list of electors drawn up by the precinct electoral commission on the election day, which includes voters not included in the voter list.

Political Party

A political union, political organization, a union of persons for joint political-civil purposes. It is created in the manner prescribed by the law, and is subject to state registration in the Republic of Armenia.

Դաշինք / քաղաքական /

Կուսակցությունների միավորում: Ստեղծվում է ընտրություններին կամ հանրաքվեներին համատեղ հանդես գալու նպատակով՝ օրենքով սահմանված կարգով:

Քաղաքական կոալիցիա

Քաղաքական տարբեր ուժերի՝ կուսակցությունների և դաշինքների կողմից կազմվող քաղաքական համագործակցության ձևաչափ՝ համատեղ իշխանություն կազմելու, համատեղ նպատակներ իրագործելու և այլ քաղաքական նպատակներով:

Թեկնածու

Ընտրապայքարին մասնակցելու ցանկություն ունեցող և / կամ մասնակցող անձ: Մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում առաջադրվում է ինքնաառաջադրման եղանակով կամ որևէ կուսակցության կողմից առաջադրմամբ: Համամասնական ընտրակարգով ընտրություններում կուսակցության առաջադրած ընտրական ցուցակում ընդգրկված անձ:

Alliance / Political /

A union of political parties that are created to run jointly in elections or referendums in accordance with the law.

Political Coalition

A format of political cooperation formed by different political powers, i.e. political parties and alliances, to establish a joint government, to achieve common goals, and for other political purposes.

Candidate

A person wishing to run or running in the elections. In the case of elections under the majoritarian electoral system, the person is either self-nominated or is nominated by a political party. During elections under the proportional electoral system, the person is included in the electoral list of the political party.

Գրանցված թեկնածու

Ընտրական հանձնաժողովի կողմից առաջադրման փաստաթղթերի հիման վրա գրանցված, թեկնածուի կարգավիճակ ստացած անձ:

Թեկնածուի առաջադրում

Առաջադրող կուսակցության կամ թեկնածուի կողմից տվյալ ընտրության առաջադրման համար սահմանված դիմումը և դրան կից՝ օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողովին ներկայացնելը:

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածուներ

Օրենսդրությամբ սահմանված ազգային փոքրամասնությունների տրամադրվելիք մանդատը զբաղեցնելու նպատակով ընտրություններին մասնակցող կուսակցության կամ դաշինքի կողմից առաջադրված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորի թեկնածու:

Registered Candidate

A person who has received the status of a registered candidate according to the decision of the electoral commission on the basis of nomination documents.

Candidate Nomination

Submitting to the relevant electoral commission the application and other accompanying documents required by the legislation for nomination in the given election by the nominating political party or candidate.

National Minority Deputy Candidates

A candidate for Deputy representing a national minority, nominated by a political party or alliance running in the elections for the mandate to be provided to national minorities in accordance with the Law.

Նախընտրական քարոզարշավ

Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատված, որի ընթացքում քարոզչության համար գործում են ընտրությունների մասնակցող կուսակցությունների, թեկնածուների հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկություն ապահովելու սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչություն

Նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

Քարոզչական պաստառ

Կուսակցությունների, թեկնածուների ներկայացնելու, կողմ կամ դեմ քարոզելու համար պատրաստված, տպագրված նյութ:

Election Campaign

A period defined by the Electoral Code during which the established rules for the use of public resources, campaigning, and ensuring financial transparency apply to provide equal opportunities for the political parties and candidates running in the elections.

Pre-Election Agitation

Any action during the pre-election campaign that aims to persuade voters to vote or not to vote for a particular candidate or political party (alliance of political parties).

Campaign Poster

A printed poster for presenting the political parties, and/or candidates, and campaigning for or against.

Քարոզչական տպագիր նյութեր

Կուսակցություններին, թեկնածուներին ներկայացնելու, կողմ կամ դեմ քարոզելու համար պատրաստված, տպագրված տպագիր և այլ նյութեր:

Նախընտրական քարոզչության եթերաժամանակ

Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դաշինքներին, թեկնածուներին նախընտրական ժամանակահատվածում տրամադրվող հեռուստատեսային կամ ռադիո եթերաժամանակ:

Քարոզչական տեսաֆիլմեր

Կուսակցություններին, թեկնածուներին ներկայացնելու, կողմ կամ դեմ քարոզելու համար պատրաստված, նկարահանված տեսաֆիլմեր:

Նախընտրական բանավեճ

Կուսակցություններին, թեկնածուների ծրագրերը հանրությանը ներկայացնելու, միմյանց հարցեր տալու, պատասխաններ ստանալու նպատակով ընտրապայքարին մասնակցող անձանց միջև կազմակերպված բանավեճ:

Campaign Print Materials

Printed materials for presenting the political parties, and/or candidates, and campaigning for or against.

Pre-electoral Campaign Airtime

Limited television or radio airtime provided to political parties, alliances, and candidates during the pre-election period.

Campaign Videos

Filmed videos for presenting the political parties, and/or candidates, and campaigning for or against.

Pre-Election Debate

A debate organized between the contesting parties, candidates to present their programs to the public, to ask each other questions, and get answers.

Ընտրողների կամքի ազատ արտահայտում

Ընտրողների կողմից ազատ, անկաշկանդ, ինքնուրույն, առանց որևէ ճնշման կամ հարկադրանքի ընտրություններին, քվեարկությանը մասնակցելու և սեփական կամարտահայտությամբ քվեարկելու իրավունք, հնարավորություն:

Քաղաքական գործիչ

Կուսակցական, քաղաքական գործունեությամբ հրապարակայնորեն զբաղվող, քաղաքական իշխանության մաս կազմող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ:

Voter's Free Will

A right / opportunity to participate in elections and vote in a free, unfettered, independent manner, without any pressure or coercion, at one's own will.

Political Actor

A person who is publically engaged in political activities, is part of political power or holds a political position.

Գլուխ
Chapter | 6

Ընտրությունների
ֆինանսավորում
Election Funding

Ընտրական գրավ

Ընտրություններում թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից առաջադրվելու և գրանցվելու համար վճարվող պարտադիր պետական վճար: Որոշ դեպքերում, օրինակ՝ ընտրվելու պարագայում, այն ընտրություններից հետո վերադարձվում է:

Նախընտրական հիմնադրամ

Ընտրություններում թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչության ֆինանսավորման նպատակով բացված բանկային հաշիվ:

Նախընտրական հիմնադրամի հայտարարագիր

Նախընտրական հիմնադրամի մուտքերի և ելքերի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը սահմանված ժամկետում և կարգով ներկայացվում է համապատասխան պետական մարմնին՝ հիմնադրամի շարժը վերահսկելու և հրապարակայնացնելու նպատակով:

Electoral Deposit

A mandatory state fee paid by candidates or political parties (alliances of political parties) for nomination or registration in the elections. In some cases, for example, if elected, it is returned after the election.

Campaign Fund

A bank account opened by candidates or political parties (alliances of political parties) to finance the election campaign.

Campaign Fund Declaration

A document containing information on the financial flows of the pre-election fund, which is to be duly submitted to the relevant state body within the established period of time for the purpose of monitoring and publicizing the fund flows.

Գլուխ
Chapter | 7

Քվեարկության սենյակում
ներկա գտնվելու իրավունք
ունեցող անձիք
Persons Entitled to be Present
in the Voting Room

Դիտորդ

Ընտրական հանձնաժողովների աշխատանքները և քվեարկության ու ամփոփման ընթացքը ազատորեն դիտարկելու իրավունք ունեցող անձ, ով հավատարմագրվում է դիտորդական առաքելության կողմից:

Դիտորդական առաքելություն

Ընտրական օրենսդրության պահանջների համաձայն՝ ընտրությունների ամբողջ ընթացքին հետևելու իրավունքով օժտված, ԿԸՀ-ում սահմանված կարգով հավատարմագրված տեղական կամ միջազգային հասարակական կազմակերպության կամ միջազգային կառույցի կամ նախաձեռնություն: Գրանցվում է յուրաքանչյուր ընտրության համար՝ ներկայացնելով դիտորդների ցանկ:

Միջազգային դիտորդ

Միջազգային հասարակական կազմակերպության կամ միջազգային կառույցի կողմից դիտորդական առաքելության դիտորդների ցանկով գրանցված դիտորդ:

Observer

A person who has the right to freely observe the work of the election commissions, voting, and counting processes, and is registered by the observation mission.

Observation Mission

An initiative registered by a local or international non-governmental organization or by an international institution with the right to observe the entire election process in accordance with the requirements of the Electoral Code. To be registered for each election by submitting a list of observers.

International Observer

An observer from the list of observers of an observation mission registered by an international non-governmental organization or international institution.

Տեղական դիտորդ

Տեղական հասարակական կազմակերպության կողմից դիտորդական առաքելության դիտորդների ցանկով հավատարմագրված դիտորդ:

Այցելու

Համապատասխան հրավերով ընտրական գործընթացը դիտարկելու իրավունք ունեցող անձինք: Այցելու կարող են լինել հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների կամ այլ երկրների ընտրական մարմինների ներկայացուցիչները:

Չանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ

Լրատվություն ապահովող կազմակերպությունների կողմից ընտրությունները լուսաբանելու համար գործուղված լրագրողներ կամ օպերատորներ: Քվեարկության ընթացքին կարող են հետևել այն ներկայացուցիչները, որոնք նախապես հավատարմագրվել են:

Domestic Observer

An observer from the list of observers of an observation mission registered by a local / national non-governmental organization.

Visitor

Persons registered on the basis of a relevant invitation to observe the electoral process. Representatives of accredited diplomatic and consular missions or election bodies of other countries can be visitors.

Mass Media Representative

Journalists or cameramen sent by media organizations to cover the elections. Only pre-accredited representatives can follow the voting process.

Հավատարմագրում

Ընտրական օրենսդրությամբ սահմանված գործընթաց, որը նախատեսված է դիտորդական առաքելություններին և ՉԼՄ-ներին հավատարմագրելու, նրանց ներկայացուցիչներին համապատասխան վկայականներ տրամադրելու համար: Հավատարմագրման համար կազմակերպությունը դիմում է ԿԸՀ-ին՝ ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը:

Դիտորդական վկայական

Միջազգային կամ տեղական դիտորդներին ԿԸՀ-ի կողմից տրամադրվող սահմանված ձևի փաստաթուղթ, որը պարունակում է դիտորդի անունը, ազգանունը, դիտորդական առաքելության անվանումը: Ընտրական հանձնաժողովի նիստերին և տեղամասային կենտրոնում ներկա գտնվելիս դիտորդական վկայականը պարտադիր պետք է կրել վերնազգեստի վրա:

Accreditation

A process defined by the electoral legislation which is intended to register observer missions and mass media, and to issue badges to their representatives. The organization applies for accreditation by submitting the required documents to the CEC.

Observer Badge

A document provided to the international or local observers by the CEC containing the name, surname of the observer and the name of the observation mission. When attending the sessions of the electoral commission or visiting the polling station, the observation badge must be visibly worn on the outerwear.

Դիտորդի իրավունքներ և պարտականություններ

Ընտրական օրենսդրությամբ սահմանված իրավունքներ, երաշխիքներ և պարտականություններ, որոնք կանոնակարգում են դիտորդի՝ ընտրությունները դիտարկելու գործընթացը:

Վստահված անձ

Ընտրական օրենսդրությամբ նախատեսված թեկնածուների կամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից ընտրական գործընթացներին հետևող, նրանց շահերը պաշտպանող անձ:

Վստահված անձի իրավունքներ և պարտականություններ

Ընտրական օրենսդրությամբ վստահված անձանց համար սահմանված իրավունքներ և պարտականություններ, որոնք կանոնակարգում են նրանց կողմից ընտրական գործընթացներին հետևելու, թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շահերը պաշտպանելու գործընթացը:

Observer Rights and Responsibilities

Rights/guarantees and responsibilities of the observers defined by the Electoral Code, regulating the process of observing the elections.

Proxy

A person who follows the electoral process and defends the interests of the candidates or political parties (alliances of political parties) as prescribed by the Law.

Proxy Rights and Responsibilities

Rights and responsibilities of the proxies defined by the Electoral Code, regulating the process of following the elections, and defending the interests of the candidates or political parties (alliances of political parties).

Խորհրդակցական ձայնի իրավունք

Ընտրական հանձնաժողովի աշխատանքերին հետևելիս, ընտրական հանձնաժողովների նիստերին ներկա գտնվելիս, իրենց կարծիքը հանձնաժողովին ներկայացնելու՝ ընտրական օրենսգրքով վստահված անձանց վերապահված իրավունք:

Լիազոր ներկայացուցիչ

Թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նշանակված, նրանց անունից ընտրությունները կազմակերպող, ընտրական հանձնաժողովում հանդես գալու իրավունքով օժտված անձ:

Consultative Right

A right reserved to proxies by the Electoral Code to submit their independent opinion to the commission when following the work or attending the sessions of the electoral commissions.

Authorized Representative

A person appointed by candidates, or political parties (alliance of political parties) and endowed with the right to act on their behalf in the electoral commission that organizes the elections.

Գլուխ
Chapter | 8

Ընտրական
հանձնաժողովների
համակարգ և քվեարկության
կազմակերպում
Electoral Commission System
and Organization of Voting

Ընտրական հանձնաժողովներ

Ընտրություններ կազմակերպելու նպատակով կազմավորված անկախ կոլեգիալ մարմին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)

Ընտրությունները և հանրաքվեները կազմակերպելու և դրանց նկատմամբ օրինականությունը հսկելու սահմանադրական լիազորությամբ օժտված անկախ կոլեգիալ մարմին, որն ընտրվում է Ազգային ժողովի կողմից վեց տարի ժամկետով: Բաղկացած է յոթ անդամից, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (ԸԸՀ)

ԿԸՀ-ի կողմից ձևավորվող և մշտական հիմունքներով ու կոլեգիալության սկզբունքով գործող ընտրական մարմին, որն ունի առանձնացված սպասարկման տարածք: Կազմակերպում և ամփոփում է ՏԻՄ ընտրությունները: Ապահովում է կապը ԿԸՀ-ի և ՏՀԸ-ների միջև:

Electoral Commissions

An independent collegial body formed to organize elections.

Central Electoral Commission

An independent collegial body with constitutional authority to organize elections and referendums, and to monitor their legitimacy. It consists of seven members, including the Chairperson, the Deputy, and the Secretary of the Commission, who are elected by the National Assembly for a term of six years.

Territorial Electoral Commission (TEC)

A middle-level electoral body, formed by the CEC: operates on a permanent basis on the principle of collegiality, and has a separate service area. It organizes and summarizes the local self-government elections, and serves as a binding link between the CEC and PECs.

Տեղամասային ընտրական հանձնաժողով (ՏՀՀ)

Ստորին օղակի ընտրական մարմին, որը ձևավորվում է յուրաքանչյուր ընտրության համար, նախապատրաստում, կազմակերպում և ամփոփում է քվեարկությունն իր ընտրական տեղամասում: Գործում է կոլեգիալության սկզբունքով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վերապատրաստում

Ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների համար իրենց լիազորությունները և գործառույթները ուսուցանելու նպատակով կազմակերպվող դասընթաց: ՏՀՀ անդամների համար այս դասընթացին մասնակցելը պարտադիր է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների որակավորման ստուգարք

ՏՀՀ անդամության թեկնածուների համար Ընտրական օրենսգրքով պահանջվող որակավորման վկայականի տրամադրման համար ԿԸՀ-ի կողմից կազմակերպվող ստուգարք: Ստուգարքում դրական գնահատական ստացած անձինք համարվում են որակավորված, ինչը նրանք թույլ է տալիս նշանակվել ՏՀՀ անդամ:

Precinct Electoral Commission (PEC)

A lower-level electoral body formed for each election: prepares, organizes, and summarizes the voting in each polling station, and operates on the principle of collegiality.

Training of PEC Members

Training for the established precinct electoral commissions on their responsibilities and functions. Participation in this training is mandatory for the PEC members.

Attestation of PEC Members

Attestation organized by the CEC in order to issue a qualification certificate to PEC membership applicants as prescribed by the Electoral Code. Those who receive a positive grade on the test become qualified to be appointed a member of the PEC.

Ընտրական հանձնաժողովի կազմավորում

Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի / մարմինների կողմից ընտրական հանձնաժողովի ձևավորում:

Ընտրական հանձնաժողովների լիազորություններ

Սահմանադրությամբ և օրենքներով ընտրական հանձնաժողովին վերապահված գործառույթներ, իրավասություններ, անելիքներ:

Ընտրական փաստաթղթեր

Գրավոր ակտեր, որոնք ընդունվում, կիրառվում են ընտրությունների նախապատրաստման, անցկացման և ամփոփման աշխատանքները կազմակերպելու համար: Ընտրական փաստաթղթերը ընտրություններից հետո արխիվացվում են:

Ընտրական հանձնաժողովի անդամ

Օրենքով սահմանված կարգով ընտրական հանձնաժողովում իրավասու մարմնի կողմից նշանակված անձ: Ընտրական հանձնաժողովի անդամը գործում է անկախ, չի ներկայացնում իրեն նշանակողին:

48

Formation of Electoral Commission

Formation of an electoral commission by the body / bodies authorized to appoint members to the electoral commission in accordance with the procedure established by the legislation.

Authorities of Electoral Commission

Functions, powers, tasks assigned to an electoral commission by the Constitution and laws.

Electoral Documents

Written acts that are adopted and used to manage the preparation, organization, and summarization of elections. Electoral documents are archived after the elections.

Electoral Commission Member

A person appointed by the competent body in the electoral commission in the manner prescribed by the law. The member of the electoral commission acts independently and does not represent the person who appoints him / her.

Գլուխ
Chapter | 9

Քվեարկության
կազմակերպում
Organization
of Voting

Քվեարկության տեղը և ժամանակը

Այն վայրը և օրացույցային ժամկետը, որտեղ և երբ կազմակերպվում է ընտրողների սպասարկումը՝ իրենց ընտրելու իրավունքն անմիջականորեն իրացնելու համար: Քվեարկությունը կազմակերպվում է տեղամասային կենտրոնում, սկսվում է 08:00-ին և ավարտվում 20:00-ին:

Տեղամասային կենտրոն

Շենք, շինություն, որը հատկացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ քվեարկությունը կազմակերպելու և արդյունքներն ամփոփելու համար: Տեղամասային կենտրոնները պետք է համապատասխանեն Ընտրական օրենսգրքով և ԿԸՀ որոշումներով սահմանված չափանիշներին:

Մատչելի տեղամասային կենտրոն

Ընտրողների, այդ թվում՝ տեղաշարժման և այլ դժվարություններ ունեցող ընտրողների համար կահավորված տարածք, որը հնարավորություն է տալիս բոլորին անխոչընդոտ մասնակցելու քվեարկությանը: Մատչելիությունը վերաբերում է ամբողջ տեղամասային կենտրոնին՝ շենքի

Voting Place and Time

The place and calendar period where and when the voters are serviced to directly exercise their right to vote. Voting is organized in the polling station, starts at 08:00 am, and ends at 20:00.

Polling Station

A building / facility which is allocated by the local self-government bodies to organize the voting process and summarize the voting results. Polling stations shall comply with the standards defined by the Electoral Code and the CEC decisions.

Accessible Polling Station

A polling station furnished in a way to ensure the participation of all the voters, including those with mobility and other disabilities, in the elections without any obstacle. Accessibility refers to the whole polling station: the entrance of the building, the access to the building, the width of the doors,

մուտքին, շենքին մոտենալուն, դռների կայնությունը, վերելակի առկայությունը և այլն:

Քվեարկության սենյակ

Տեղամասային կենտրոնում առանձնացված տարածք, որը կահավորվում է քվեարկության բուն ընթացքը կազմակերպելու և արդյունքներն ամփոփելու գործընթացը կազմակերպելու համար: Ընտրողները գրանցվում և քվեարկությունն իրականացնում են քվեարկության սենյակում:

Քվեարկության խցիկ

Քվեարկության սենյակում առանձնացված / կահավորված վայր, որտեղ ընտրողը քվեաթերթիկ ստանալուց հետո գաղտնի կատարում է իր քվեարկությունը:

Ընտրական հանձնաժողովի գրանցամատյան

Սահմանված բովանդակությամբ հաստատված, նախապես տպագրված, էջակալված մատյան, որտեղ ընտրական հանձնաժողովները գրառումներ կատարելու միջոցով գրանցում են իրենց գործունեության հետ կապված արձանագրությունները, մտից, ելից

the availability of an elevator, etc.

Voting Room

A separate area in the polling station, furnished to organize the actual voting process and to the procedure of summarizing the results. Voters register and vote in the voting room.

Voting Booth

A separate furnished place in the voting room, where the voter secretly casts his/her vote after receiving a ballot.

Journal of Electoral Commission

An approved, pre-printed, paginated register with an established content, where the electoral commissions register the protocols related to their activities by making notes, keep track of the incoming / outgoing documents and make other records as defined by the legislation.

փաստաթղթերը և կատարում են օրենսդրությամբ սահմանված այլ գրառումներ:

Քվեաթերթիկ

Սահմանված նմուշին համապատասխան գրանցված թեկնածուների կամ կուսակցությունների վերաբերյալ պահանջվող տեղեկություններ պարունակող տպագրված թերթիկ, որի միջոցով ընտրողը կատարում է իր քվեարկությունը: Քվեաթերթիկները նախապես տպագրվում և քվեարկության նախորդ օրը տեղափոխվում են տեղամասային կենտրոն՝ քվեարկության օրը ընտրողներին տրամադրելու համար:

Շոշափելի քվեարկության ուղեցույց

Տեսողական ինդիքներ ունեցող, շոշափելու միջոցով ընթերցելու ունակություն ունեցող անձանց համար պատրաստված և քվեարկության կարգը նկարագրող թերթիկ:

Էլեկտրոնային քվեաթերթիկ

Էլեկտրոնային / ինտերնետային եղանակով քվեարկությանը մասնակցելու համար հաստատված նմուշին համապատասխան

Ballot

A printed piece of paper containing the required information about the registered candidates or political parties in accordance with the established sample, via which the voter casts his / her vote. The ballots are printed in advance, and are transferred to the polling station a day before to be provided to the voters on the voting day.

Tactile Ballot Guide

A leaflet describing the voting procedure, intended for people with visual impairments, and able to read by touch.

Electronic Ballot

An electronic file according to the approved sample intended for online / internet voting.

Էլեկտրոնային միջոց / Ֆայլ:

Քվեարկության ծրար

Սահմանված նմուշին համապատասխան տպագրված ծրար, որի մեջ քվեաթերթիկը տեղադրելու եղանակով / միջոցով ընտրողը կատարում է իր քվեարկությունը: Ընտրողը քվեաթերթիկը քվեարկության ծրարում տեղադրելուց հետո համապատասխան ընթացակարգով ծրարը գցում է քվեատուփի մեջ:

Քվեատուփ

Տեղամասային կենտրոնում տեսանելի տեղում տեղադրված թափանցիկ փակ արկղ, որն ունի համապատասխան ճեղք, որով ընտրողը քվեարկության ծրարը նետում է արկղի մեջ:

Ինքնաստանձվող դրոշմանիշ

Հատուկ պաշտպանվածություն ունեցող, հաշվառվող փաստաթուղթ, որը փակցվում է ընտրողի կողմից քվեարկության ծրարի մեջ դրված քվեաթերթիկի վրա՝ ծրարի կտրվածքից: Ունի տպագրված վավերապայմաններ՝ պայմանավորված տվյալ ընտրության և տվյալ ընտրական տեղամասի համարով:

Voting Envelope

An envelope printed in accordance with the established sample, in which the voter places the ballot to cast his / her vote. After placing the ballot in the voting envelope, the voter drops the envelope into the ballot box according to the defined procedure.

Ballot Box

A transparent closed box placed in the polling station, which has a slit, through which the voter drops the ballot envelopes into the box.

Self-Adhesive Stamp

A countable document with special protective layers, which is posted by the commissioner on the ballot paper placed in the ballot envelope from the cut of the envelope. It is typographically printed, bearing the number of the election and electoral precinct.

Համարակալված կտրոն

Ընտրողին գրանցելու գործառույթն իրականացնող ՏԸՀ անդամի կողմից սահմանված նմուշի տպագրված թերթիկի վրա ընտրողի տվյալները ձեռքով լրացված և ընտրողին տրված հաշվառման ենթակա փաստաթուղթ, որն ընտրողը հանձնում է քվեատուփի համար պատասխանատու ՏՀԸ անդամին:

Հանձնաժողովի անդամի անհատական կնիք

ՏԸՀ անդամին տրամադրված կնիք, որը հանձնաժողովի անդամը օգտագործում է ընտրողին գրանցելու գործառույթի ժամանակ՝ կնքելով ընտրողի քվեարկության կտրոնը և ընտրողների ցուցակում ընտրողի տվյալների դիմաց՝ դրա համար սահմանված վանդակում:

Տեխնիկական սարքավորումներ

Տեղամասային կենտրոնում ընտրողներին գրանցելու, ընտրողների մատնահետքերը հավաքագրելու համար նախատեսված հատուկ սարքավորում:

Numbered Pass

A countable document filled in by hand with voter's data on an established and printed sample and given to the voter by a PEC member performing the voter registration function, which, afterward, the voter hands over to the PEC member responsible for the ballot box.

Seal of the Commission Member

A seal provided to the PEC member, which is used by the commission member during the voter registration process to seal the voter ballot and the designated tick box in front of the voter data in the voter list.

Technical Equipment

Special equipment for registering voters and collecting voters' fingerprints in the polling station.

Քվեարկության մատչելիություն

Ընտրողների, այդ թվում՝ տեղաշարժման և այլ դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությանը հեշտությամբ, ոչուրիս, առանց լրացուցիչ խոչընդոտների մասնակցելու հնարավորություն:

Ընտրությունների թափանցիկություն

Ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման մեջ ներգրավված այլ մարմինների կողմից ապահովվող ընտրական գործընթացների բացություն, տեսանելիություն, դիտարկման և վերահսկման հնարավորություն:

Voting Accessibility

An opportunity for voters, including those with mobility and other disabilities, to vote easily, and without additional obstacles.

Election Transparency

Openness, visibility, and opportunity to observe and control the electoral processes carried out by electoral commissions, as well as other bodies involved in the organization of elections.

Գլուխ | 10
Chapter

Քվեարկության կարգ Voting Procedure

Ընտրական հանձնաժողովի նիստ

Ընտրական հանձնաժողովի կողմից, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ ընտրական հանձնաժողովի անդամների մասնակցությամբ ժողով, գործընթաց, որի միջոցով հանձնաժողովներն իրականացնում են իրենց գործունեությունը, իրացնում իրենց լիազորությունները, անցկացնում են քննարկումներ և քվեարկություններ:

Ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրություն

Ընտրական հանձնաժողովի նիստի ընթացքի և իրադարձությունների համառոտ գրավոր նկարագրություն, որը սահմանված կարգով արխիվացվում է և պահպանվում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների գործառույթների բաշխում

Քվեարկության ընթացքը կազմակերպելու, ընտրողներին սպասարկելու համար ՏՀԸ անդամների միջև աշխատանքների բաժանում, որն իրականացվում է օրենսդրությամբ

58

Session of Electoral Commission

A meeting / process with the participation of the members of the electoral commission in accordance with the procedures prescribed by the legislation, through which the commissions carry out their activities, exercise their powers, hold discussions and vote.

Session Protocol of Electoral Commission

A brief written description of the course and events of the electoral commission session, which is archived and stored in the prescribed manner.

Distribution of Functions between PEC Members

Distribution of work among PEC members to organize the voting process, and to serve the voters, which is carried out in accordance with the procedure prescribed by the Law, by drawing lots on the voting day from 07:00 am to 08:00 am.

սահմանված կարգով, վիճակահանությամբ, քվեարկության օրը ժամը՝ 07:00-08:00-ի սահմաններում:

Տեղամասային կենտրոնի բացում

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից, առավոտյան ժամը՝ 08:00-ին նախապատրաստվելու և բարձրաձայն ազդարարելու միջոցով ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն թույլատրելու օրենսդրությամբ սահմանված գործընթաց:

Քվեարկություն

Ընտրողի կողմից իր ազատ կամարտահայտության միջոցով, ընտրություններին մասնակցելու, իր ընտրությունը կատարելու գործողություն:

Ընտրող

Օրենսդրությամբ սահմանված տարիքին հասած, ընտրություններին քվեարկելու իրավունք ունեցող անձ:

Opening of Polling Station

A process defined by the legislation during which on the voting day, at 8:00 am, the chairperson of the precinct electoral commission announces the commencement of voting and authorizes the entry of electors into the voting room.

Voting

The process of making one's choice and participating in the elections through the free expression of will by the voter.

Voter

A person who has attained the age established by the legislation, and has the right to vote in elections.

Ընտրողի օգնող

հնքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին քվեարկությունը կատարելու համար օգնող անձ:

Օգնողի տվյալների գրանցում

հնքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող ընտրողին, քվեարկությունը կատարելու համար՝ օգնող անձի տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում լրացնելու օրենքով պահանջվող գործընթաց:

Այլ անձի փոխարեն քվեարկություն

Դիտավորությամբ ուրիշի փոխարեն քվեարկություն կատարել: Համարվում է քրեական հանցագործություն:

Ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ

Քվեարկությանը մասնակցելու հնարավորություն տվող փաստաթուղթ, որի միջոցով ընտրողը կարող է նույնականացվել և կատարել իր քվեարկությունը:

Voter Assistant

A person assisting the voter who is not able to vote independently.

Registration of the Assistant

The process of filling in the polling station journal the data of a person assisting the voter who is not able to vote independently as prescribed by the law.

Impersonated Voting

Intentionally voting for someone else. It is considered a criminal offense.

Voter Identification Document

A document giving an opportunity to participate in the voting, through which the voter can be identified to cast his / her vote.

Նույնականացման քարտ

Քվեարկությանը մասնակցելու համար թույլատրելի, ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տեսակ՝ պատրաստված պլաստիկ քարտից: Պարունակում է անուն, ազգանուն, ընտրողի նույնականացման տվյալներ, համար, վավերականության ժամկետ, լուսանկար և այլն:

Կենսաչափական անձնագիր

Քվեարկությանը մասնակցելու համար թույլատրելի, ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տեսակ՝ պատրաստված գրքույկի տեսքով: Պարունակում է անուն, ազգանուն, ընտրողի նույնականացման տվյալներ, համար, վավերականության ժամկետ, լուսանկար և այլն:

Ոչ կենսաչափական անձնագիր

Քվեարկությանը մասնակցելու համար թույլատրելի, ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տեսակ՝ պատրաստված գրքույկի տեսքով: Պարունակում է անուն, ազգանուն, համար, վավերականության ժամկետ, լուսանկար և այլն:

Identification Card

A type of acceptable identification document to participate in the voting, made of a plastic card. It contains name and surname, voter identification data, number, validity period, photo, etc.

Biometric Passport

A type of acceptable identification document to participate in the voting, made in the form of a book. It contains name and surname, voter identification data, number, validity period, photo, etc.

Ordinary Passport

A type of acceptable identification document to participate in the voting, made in the form of a book. It contains name and surname, number, validity period, photo, etc.

Ընտրողի ստորագրություն

Ընտրողների ցուցակում ընտրողին գրանցելիս՝ իր անվան դիմաց՝ համապատասխան վանդակում ընտրողի կողմից պարտադիր կատարվող նշում:

Voter Signature

When registering a voter in the voter list, a mandatory mark made by the voter in front of his / her name in the appropriate tick box.

Գլուխ
Chapter | **11**

**Քվեարկության
արդյունքների ամփոփում
Summarization
of Voting Results**

Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության ավարտից հետո, ընտրողների քվեարկության արդյունքի և այլ պահանջվող տվյալների հաշվում, գրանցում, հրապարակում: Իրականացվում է քվեարկության սենյակում, պետք է ավարտվի քվեարկության ավարտից հետո 12 ժամվա ընթացքում:

Վավեր քվեաթերթիկ

Սահմանված նմուշի ծրարից դուրս եկած, ինքնաստսնձվող դրոշմանիշ պարունակող, որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկ: Հաշվարկվում և տեսակավորվում են ըստ կուսակցությունների կամ թեկնածուների, օրենսդրությամբ սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են, որպես ընտրական փաստաթղթեր:

Անվավեր քվեաթերթիկ

Սահմանված նմուշի ծրարից դուրս եկած, ինքնաստսնձվող դրոշմանիշ պարունակող, սակայն քվեարկության կարգի խախտման

Summarization of Voting Results

The process of counting, registering, and publishing the voting results and other required data. It is carried out in the voting room, and shall be completed within 12 hours after the end of voting.

Valid Ballot

A ballot with a self-adhesive stamp that comes out of the established sample ballot envelope in favor of a political party or candidate. They are counted and sorted by political parties or candidates, archived in accordance with the legislation, and stored as election documents.

Invalid Ballot

A ballot with a self-adhesive stamp that comes out of the established sample ballot envelope, but not counted in favor of any political party or candidate as

հետևանքով որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին չհաշվարկվող քվեաթերթիկ: Անվավեր քվեաթերթիկները հաշվարկվում են առանձին, օրենսդրությամբ սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են, որպես ընտրական փաստաթղթեր:

Քվեարկության արդյունքների արձանագրություն

Ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփումից հետո հաշվարկված և հրապարակված արդյունքներն օրենսդրությամբ սահմանված ձևանմուշի վրա լրացման միջոցով կազմվող փաստաթուղթ: Արխիվացվում և պահպանվում է, որպես ընտրական փաստաթուղթ:

Քվեարկության արդյունքների աղյուսակավորում

Քվեարկության արդյունքները ամփոփելուց հետո, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով առանձին ընտրական տեղամասերի արդյունքներ պարունակող տեղեկությունների ամբողջական հրապարակայնացում:

a result of violation of the voting procedure. Invalid ballots are counted separately, archived in accordance with the legislation, and stored as election documents.

Protocol of Voting Results

After summarization of the voting results by the electoral commission, a document to be compiled by filling in the counted and published results in the sample established by the legislation. It is archived and stored as an election document.

Tabulation of Voting Results

After the summarization of the voting results, fully publicizing the information on the results of the electoral precincts within the timeframes and in accordance with the procedure defined by the legislation.

Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկ

Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրված, օրենսդրությամբ սահմանված ցանկով փաստաթղթերը տեղամասային կենտրոնում տեղադրելու և փակ վիճակում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխելու պարկ, որը տեխնիկապես հնարավոր չէ օգտագործել երկրորդ անգամ կամ փակելուց հետո առանց պարկը վնասելու բացել այն:

Բողոքարկում

Քվեարկության կամ ընտրությունների արդյունքների վերաբերյալ համապատասխան ընտրական հանձնաժողով դիմում-բողոք ներկայացնելու միջոցով վիճարկման գործընթաց:

Ձայների վերահաշվարկ

Տեղամասի քվեարկության արդյունքները կրկին հաշվելու գործընթաց՝ իրականացվող վերադաս ընտրական հանձնաժողովի կամ այլ իրավասու մարմնի կողմից:

66

Disposable Sack for Election-Related Documents

A sack provided to the precinct electoral commission and intended for placing the documents in the polling station in accordance with the list established by the legislation, and submitting to the territorial electoral commission in a closed condition, which is technically impossible to use a second time or to open without damaging it.

Appealing

The process of disputing the voting or election results by submitting an appeal to the relevant electoral commission.

Recount of Voting Results

The process of recounting the results of a polling station by a superior electoral commission or other competent body.

Վերաքվեարկություն

Նույն թեկնածուների (գրանցված կուսակցությունների) կազմով քվեարկությունը կրկին անցկացնելու գործընթաց:

Հետընտրական գործընթաց

Ընտրությունների ավարտից հետո ընտրություններով և դրանց արդյունքներով պայմանավորված՝ տեղի ունեցող գործընթաց:

Լիազորագիր

Այլ անձի փոխարեն հանդես գալու իրավունքը հավաստող փաստաթուղթ՝ տրված/ստորագրված լիազորողի կողմից:

Վարչական ակտ

Վարչական մարմնի կողմից կոնկրետ գործով ընդունված արտաքին ներգործություն ունեցող որոշում:

Վարչական վարույթ

Վարչական մարմնի կողմից իրականացվող վարչական ակտի ընդունմանն ուղղված օրենսդրությամբ սահմանված գործընթաց:

Repeat Voting

The process of holding the voting again with the same list of the nominated candidates or political parties.

Post-Election Process

A process that takes place after the elections, conditioned by the elections and their results.

Power of Attorney

A document certifying the right to act on behalf of another entity, issued / signed by the authorizing person.

Administrative Act

A decision with external influence made by the administrative body on a specific case.

Administrative Proceeding

A process defined by the legislation aimed at the adoption of the administrative act implemented by the administrative body.

Ընտրությունների արդյունքների ամփոփում

Համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների, ինչպես նաև ընտրությունների վերաբերյալ իրականացված վարույթների հիման վրա ընտրության արդյունքի մասին որոշման կայացում:

Մանդատների բաշխում

Ընտրությունների արդյունքների ամփոփման հիման վրա համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից կուսակցություններին հասանելիք մանդատների վերաբերյալ որոշման ընդունում:

Մանդատների գրանցում

Ընտրությունների արդյունքների հիման վրա մանդատներ ստացած կուսակցությունների ընտրական ցուցակներից ընտրված թեկնածուներին, որպես Ազգային ժողովի պատգամավոր կամ ավագանու անդամ գրանցելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից արձանագրության կազմում:

Summarization of Election Results

Making a decision on the outcome of the elections by a relevant electoral commission on the basis of the voting results, as well as the election proceedings.

Distribution of Mandates

A decision made by the relevant electoral commission on the mandates to be allocated to the political parties, based on the summary of the election results.

Registration of Mandates

Making of a protocol by the relevant electoral commission on the registration of the candidates elected from the electoral lists of the political parties that received mandates based on the election results as Deputies of the National Assembly or Members of the Council of Elders.



Ընտրական Համակարգերի
Միջազգային Հաստատություն



ԵՐԵՎԱՆ / YEREVAN 2022